

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Տասներկուերորդ հաղորդում

**Հոգևոր սկզբունքները, կյանքի դասերն ու սուրբ նախազգուշացումները
բարի երկրի վայելքի առնչությամբ,
որոնք տեսնում ենք Թագավորաց առաջին և երկրորդ գրքերի
հինգ գիշավոր կերպարներով**

Գրվածքների լմբերցում. Ա Թգ 2:27-30, 35, 3:21, 12:3-5, 23, 18:1-4, 23:16-18, 9:1-2, 17, 13:13-14, 15:19, 23, 16:1, 12-13, 30:6-10, 26:19թ, Բ Թգ 11:1-27

I. Հեղիփոխության ահարոնյան քահանայությունը կարծրացել ու քուլացել էր (Ա Թգ 2:12-29), և Աստված ցանկանում էր նոր սկիզբ ունենալ Իր հավիտենական տնտեսությունն իրագործելու համար.

- Ա. Մենք բոլորս պետք է մերժենք կարծրացածության, հնության, գաղջության ու հպարտության հետ կապված ցանկացած բան և Տիրոջ հանդեպ մեզ պահենք դատարկ, բաց, բարձ, նոր, կենդանի և երիտասարդ. մենք պետք է մեկ լինենք Նրա այն ցանկության հետ, որ Քրիստոսի հետ մեկ լինենք, լցված լինենք Քրիստոսվ և զբաղված լինենք Քրիստոսվ, որպեսզի ապրենք Քրիստոսին՝ Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Հյու 3:15-22, Ղկս 18:17, Փլա 3:7-14, Գդտ 1:15-16, 2:20, 4:19, Եփս 4:16:
- Բ. Հեղիփոխության Աստծու խոսքը հազվագյուտ էր. Աստծու խոսելը գրեթե կորսվել էր (Ա Թգ 3:1). քահանայության մեջ առաջին բանը, որ քահանան պետք է անի, Աստծու անունից խոսելի է (Ելց 28:30). քահանան պետք է լինի մարդ, ով մտերմիկ է Աստծու հետ, մեկ է Աստծու հետ, ճանաչում է Աստծու սիրությունը և բարբառում է Աստծու հավիտենական տնտեսության եզակի ու առողջ ուսմունքը (Ա Տմբ 1:3-4, 6:3):
- Գ. Հեղին Սամուելին սովորեցրել էր ասել. «Խոսիր, ով Եհովա, քանի որ Քո ծառան լսում է». որպեսզի Տիրոջ անունից խոսենք և Նրա հետ մեկ լինենք Նրա հավիտենական տնտեսությունն իրագործելու համար, մենք պետք է նախ գնահատենք և ուշադիր լսենք Նրա խոսելը, որպեսզի ճանաչենք Նրա ցանկությունն ու նախասիրությունը՝ Ա Թգ 3:9-10, 21, Եսյ 50:4-5:
- Դ. Հեղին անտեսում էր քահանայությունը՝ իր երկու չար որդիներին անփութորեն դաստիարակելիս (Ա Թգ 2:28-29). սա հանգեցրեց նրա պատմության ողբերգական վախճանին, բարի երկրի նրա վայելքի ավարտին և աստվածային հայտնության մեջ, այսինքն՝ Աստծու անունից խոսելու մեջ քահանայության մարելուն. այսօր, նայելով Հեղին, մենք պետք է սովորենք բարձր գնահատել այն, ինչ Աստված մեզ տվել է Իր վերականգնման մեջ:

II. Սամուելը հավատարիմ էր Աստծուն Աստծու տված իր բոլոր կարգավիճակներում և պաշտոններում.

- Ա. Որպես դևատացի՝ նա ծառայում էր Աստծուն իր ողջ կյանքում. որպես ուխտավոր՝ նա առանց ձախողվելու պահում էր իր նվիրաբերումը

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

(խ. 35). որպես քահանա-մարգարե՝ նա ազնվորեն խոսում էր Աստծու անունից և սկիզբ դրեց մարգարեների ծառայությանը, որը փոխարինելու եկավ մարող քահանայությանը աստվածային հայտնության հարցում. որպես դատավոր՝ նա հավատարիմ էր Աստծու հանդեպ և արդարացի՝ ժողովրդի հանդեպ՝ վերջ դնելով դատավորների ծառայության ու բերելով քաջավորների ծառայությունը, որպեսզի փոխի դարաշրջանը Աստծու տնտեսության իրականացման համար:

Բ. Որպես նա, ով աշխատում էր Աստծու հետ միասին՝ Նրա տնտեսությունն իրականացնելու համար (Հվի 5:17, Բ Կրթ 6:1ա), Սամուելը հաստատվեց որպես Եհովայի մարգարե, որպեսզի խոսի Նրա անունից՝ լսելով Նրա խոսքը (Ա Թօգ 3:9-10, 20-21). մենք պետք է մշտապես վարձվենք, որպեսզի ականջ ունենանք «[լսելու], թե ի՞նչ է Հոգին ասում եկեղեցիներին» (Հյտ 2:7). ավելին՝ մենք պետք է հետևենք Մարիամի նմուշին, ով «Տիրոջ ոտքերի մոտ նստեց ու Նրա խոսքն էր լսում» (Ղկս 10:38-42).

1. Մարիամը նստեց Տիր Հիսուսի և ոչ թե մեկ ուրիշի ոտքերի մոտ. ոչ մի միջոց ավելի լավը չէ, քան ամեն պահի Նրա մոտ գալլ՝ սիրելով Նրան, երկրպագելով Նրան և անդադար հաղորդակցվելով Նրա հետ ու մնալով Նրա ներկայության մեջ:

2. Մարիամը նստեց Տիրոջ ոտքերի մոտ. նա խոնարի դիրք գրավեց, որպեսզի լսի Տիրոջ խոսելն ու ընդունի Նրա օրինությունը. խոնարհությունը սեփական անձը նստացնելը չէ, խոնարհությունը սեփական անձը անտեսելն է, այն մերժելն ու մեզ ոչինչ համարելը:

3. Նա նստեց. նրանք, ովքեր զբաղված են Տիրոջ ներկայությունից շեղվելու աստիճանի, թափառող միտք ու տատանվող մտքեր ունեն. նրանք պետք է կանգ առնեն, որպեսզի ամեն օր անձնական ժամանակ անցկացնեն Տիրոջ հետ:

4. Նա Տիրոջ խոսքն էր լսում. խոսքը, որ Տերը խոսում է մեզ հետ, հոգի և կյանք է (Հվի 6:63). Տիրոջ խոսքը նրա լսելը Տիրոջը հնարավորություն տվեց Իրեն նրան փոխանցելու և Իրեն նրա մեջ բաշխելու, որպեսզի նա հենց Տիրոջը ձեռք բերի:

Գ. Սամուելը լիակատար կերպով վայելում էր բարի երկրի իր բաժինն իր ողջ կյանքում. այսպիսով՝ նորկտակարանյան իմաստով կարելի է ասել, որ Քրիստոսին նրա վայելելու մեջ ոչ մի թերություն չկար. Սամուելի պատմության միակ թերությունն այն էր, որ նա իր երկու որդիներին դատավորներ նշանակեց Խորայելի զավակների միջավայրում՝ Ա Թօգ 8:1-3.

1. Սամուելի որդիների անարդարացի ճանապարհները հակառակ էին իրենց հոր ողջ կյանքում ունեցած մաքուր ու արդարացի ճանապարհին (12:3-5, 23) և առիթ դարձան, որ Խորայելի ժողովուրդը Սամուելին խնդրի մի քաջավոր նշանակել, որը կդատի իրենց, ինչպես բոլոր ազգերի մոտ էր (8:1-7). ուստի Սամուելի որդիները չպետք է որպես

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՁԵՐ

դատավորներ դիտարկվեն Խրայելի ժողովրդի միջավայրում (Գրծ 13:20), և Սամուելին՝ նրանց հորը, պետք է համարել վերջին դատավորը:

2. Մարդկային տեսանկյունից Սամուելն այս հարցում սխալ գործեց, բայց այս սխալն Աստծուն օգնեց շտկելու իրավիճակն Իր ժողովրդի միջավայրում՝ բերելով թագավորումը Իր տնտեսության իրազորման համար:

III. Հովնաթանը սիրում էր Դավթին, նրա հետ ուխտ կապեց և կանխասաց, որ Դավիթը թագավոր է դառնալու, և որ թագավորությունը նրա թագավորությունն է լինելու՝ Ա Թգ 18:1-4, 19:1-7, 20:8, 14-17, 41-42, 23:16-18.

Ա. Սավուդի մտադրությունը թագավորությունը Հովնաթանի համար պահպանելն էր, սակայն Հովնաթանը չէր կամենում թագավորությանը տիրել, այլ ընդունում էր, որ գահին պետք է Դավիթը լիներ:

Բ. Հովնաթանը պետք է սրա մասին իր հորն ասեր, այնուհետև քողներ իր հորը, որպեսզի Դավթի հետ լիներ. եթե Հովնաթանը հետևեր Դավթին, դա որպես նախատիպ կյանքի պատկերեր այսօր մեր հետևելը Քրիստոսին և Նրան առաջնորդյուն տալը՝ Կոս 1:18բ, Հյտ 2:4:

Գ. Հովնաթանը կորցրեց Աստծու խոստացած բարի երկրում իր բաժնի պատշաճ և լիակատար վայելքը՝ Դավթին ըստ Աստծու կամքի շիտևելու պատճառով, ինչի պատճառը իր հոր հանդեպ իր բնական կապվածությունն էր. թեև Հովնաթանը զիտակցում էր, որ Դավիթը թագավոր է լինելու, նա մնաց իր հոր հետ. դրա ողբերգական հետևանքը եղավ այն, որ նա կիսեց իր հոր ճակատագիրն ու նրա հետ վախճանվեց մարտի ժամանակ՝ Ա Թգ 31:2-6:

Դ. Հովնաթանը կանգնած էր Սավուդի և Դավթի միջև. նա մեկ մարդ էր՝ կանգնած երկու սպասավորությունների միջև. նա պետք է հետևած լիներ երկրորդ սպասավորությանը, բայց քանի որ նրա փոխհարաբերությունն առաջին սպասավորության հետ չափազանց խոր էր, նա չկարողացավ ազատվել դրա կապանքներից.

1. Յուրաքանչյուր դարաշրջանում Տերը հատուկ բան է ուզում իրազործել. Նա մտադիր է Իր համար որոշակի բաներ վերականգնել և Իր տարրեր աշխատանքներն իրականացնել. որոշակի վերականգնումն ու աշխատանքը, որ Նա անում է մի դարաշրջանում, այդ դարաշրջանի սպասավորությունն է հմնտ Ծնդ 6:13-14:

2. Դավիթն իր դարաշրջանի սպասավորն էր՝ այդ դարաշրջանի սպասավորությամբ հանդերձ (Գրծ 13:21-22, 36ա). Հին Կտակարանում Նոյն ուներ իր դարաշրջանի սպասավորությունը՝ տապանը կառուցելը, Մովսեսն ուներ իր դարաշրջանի սպասավորությունը՝ խորանը կառուցելը, իսկ Դավիթն ու Սողոմոնն ունեին իրենց դարաշրջանի սպասավորությունը՝ տաճարը կառուցելը:

3. Դարաշրջանի սպասավորը, որն ունի դարաշրջանի սպասավորությունը, տարբերվում է տեղական սպասավորներից. Մարտին

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Լյութերն իր դարաշրջանի սպասավորն էր, և Նելսոն Դարբին նոյն պես իր դարաշրջանի սպասավորն էր. ներկա դարաշրջանի սպասավորության մակարդակին հասնելու համար մենք պետք է տեսություն տեսնենք. Սեղողն ամուսնացավ Դավթի հետ, բայց այդպես էլ ոչինչ չտեսավ. նա միայն տեսավ Դավթի արտաքին իրավիճակը և չկարողացավ այն հանդուրժել. արդյունքում նա հետևում թողնվեց՝ Բ Թգ 6:16, 20-23:

4. Նոր Կտակարանում Տեր Հիսուսի սպասավորությունը եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, կառուցելու է (Մտք 16:18). բազում օժտված մարդիկ, որոնք առաջացվել են Տիրոջ համբարձման մեջ, միայն մեկ սպասավորություն ունեն, այն է՝ Քրիստոս սպասավորել Քրիստոսի Մարմինը՝ եկեղեցին, կառուցելու համար. այս կառուցումը իրագործվում է ոչ թե անմիջականորեն օժտված մարդկանց կողմից, այլ սրբերի, որոնց օժտվածները կատարելագործել են (Եփս 4:11-12, 16):
5. Աստծու կառուցման սպասավորության մեջ կան մարդիկ, որոնք առաջնորդություն են ստանձնում այդ սպասավորության մեջ յուրաքանչյուր դարաշրջանում. քող Տերը բացի մեր աշքերը՝ տեսնելու, որ որպես մարդիկ՝ մենք պետք է քրիստոնյաներ լինենք. եթե մենք քրիստոնյաներ ենք, պետք է մտնենք Տիրոջ՝ այս դարաշրջանում ունեցած սպասավորության մեջ:
6. Աստծու ողորմությունն է այն, որ մարդը տեսնում է դարաշրջանի սպասավորությունն ու դրա հետ շփում ունենում. սակայն լիովին այլ բան է, եթք մարդը քաջություն է ունենում թողնելու անցյալ սպասավորություններն ու մտնելու Աստծու ներկա սպասավորության մեջ՝ հմմտ Ա Թգ 14:1-46, Բ Թգ 6:16, 20-23:
7. Դարաշրջանի սպասավորությունը Աստծու մարդկանց է սպասավորում ներկա ճշմարտությունը. Բ Պտ 1:12-ում «ներկա ճշմարտություն» արտահայտությունը կարելի է նաև բարգմանել որպես «արդի ճշմարտություն». Տիրոջ յուրաքանչյուր մշակ պետք է Աստծուց հարցնի, թե ներկա ճշմարտությունն ինչ է՝ Մտք 16:18, Եփս 4:15-16, Հյտ 2:7, 11, 17, 26-29, 3:5, 12, 21, Սղմ 48:2, Հյտ 19:7-9, 21:2:

IV. Սավուղն ընտրվել էր Աստծու կողմից և օծվել Սամուելի կողմից՝ Խրայելի քագավոր լինելու՝ Ա Թգ 9:1-2, 17, 10:1, 24.

- Ա. Սավուղն առնվազն երկու անգամ շինազանդվեց Աստծու խոսքին, այնպես որ կորցրեց իր թագավորումն ու իր թագավորությունը (13:13-14, 15:19, 23, 28:17-19). եթք Սավուղը Ա Թգ 15-րդ գլխում շինազանդվեց Աստծուն, նա փաստորեն ապստամբեց Նրա դեմ:
- Բ. Այս գլխում Սամուելը Սավուղին ասաց. «Ապստամբությունը գուշակության մեղքի պես է, ու ամբարտավանությունը կռապաշտության ու թերափիմների պես է» (Խ. 23ա). գուշակություն կիրարկել նշանակում է շփում ունենալ չար ոգիների հետ. այն, ինչ Սավուղն արեց Աստծու դեմ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՁԵՐ

ապստամբելիս, նման էր գուշակության մեղքի. նա չէր ենթարկվում Աստծուն և Աստծու համար փաստորեն դարձավ թշնամի. արդյունքում նա կորցրեց թագավորելու իրավունքը:

- Գ. Սավուղի ողբերգական վախճանը լիովին պայմանավորված էր նրա՝ Աստծու տնտեսության հանդեպ պատշաճ վերաբերմունք չունենալով. Աստված, ցանկանալով կառուցել իր թագավորությունը իր ընտրյալ ժողովրդի միջավայրում, Սավուղին քերել էր իր տնտեսության մեջ, բայց Աստծու տնտեսությանը մասնակցելու և դրա հետ համագործակցելու փոխարեն, Սավուղը եսասեր գտնվեց և Աստծու թագավորությունն իր շահերի համար օգտագործեց, որպեսզի կառուցի իր սեփական միապետությունը. նա լցված էր թագավորման մասին մտքերով, ներառյալ մտքերն այն մասին, որ իր որդին ժառանգելու է գահը՝ 20:31:
- Դ. Այս բանում Սավուղը ծայրաստիճան եսասեր էր և սխալ. ի վերջո Աստված քողեց Սավուղին և հատեց նրան՝ նրա վրայից պատռելով թագավորությունը (15:28). քանի որ Աստված քողեց Սավուղին, նա մենակ մնաց, ինչպես մի որբ, և դժվարին պահին նրան որևէ օգնություն չցուցաբերվեց:
- Ե. Սավուղի եսասիրության պատճառով Խրայելի ժողովուրդը պարտություն կրեց և կոտորվեց փղշտացիների դեմ պատերազմելիս, իսկ Սավուղն ու նրա որդիները սպանվեցին. Սավուղի՝ իր և իր որդու համար թագավորություն ձեռք բերելու փառասիրական ձգտումը՝ Դավթի հանդեպ իր խանդրվ հանդերձ, նրանից առգրավեց Աստծու խոստացած բարի երկրի վայելքն ու վերջ դրեց դրան՝ 20:30-34:
- Զ. Սավուղի, նրա երեք որդիների և նրա զինակրի միաժամանակյա մահը Աստծու արդար դատաստանն էր մեկի հանդեպ, ով ապստամբել էր Աստծու դեմ, Նրան օգտագործել իր շահերի համար ու դարձել Նրա թշնամին (ԱՄն 10:13-14). Սավուղի ողբերգական վախճանից պետք է յուրացնենք մեր մսեղին խաչելու և մեր եսասիրությունը՝ մեր սեփական շահն ու սեփական ձգտումը, մերժելու դասը (Գդտ 5:24, Մտք 16:24, Փլպ 2:3):
- Է. Սավուղի սարսափելի վախճանի մասին գրառումը խիստ նախազգուշացում է բոլոր նրանց համար, ովքեր ծառայում են Աստծու թագավորության մեջ, որ Աստծու թագավորության ներսում առանձին աշխատանք չկատարեն և թագավորության մեջ ոչինչ չչարաշահեն. մենք չպետք է Սավուղի պես լինենք՝ փորձելով մեզ համար «միապետություն» կառուցել. ընդհակառակը, մենք բոլորս պետք է կատարենք Աստծու թագավորությունը՝ Ջրիստոսի Մարմինը, կառուցելու եզակի աշխատանքը՝ Ա Թգ 31:1-13:

V. Դավիթը Սամուելի միջոցով Աստծու կողմից ընտրվեց և օծվեց՝ Խրայելի թագավոր լինելու՝ 16:1, 12-13.

- Ա. Գողիաթին սպանելուց հետո Դավիթը Խրայելի կանանց կողմից ավելի բարձր գովքի արժանացավ, քան Սավուղը (18:7), բայց Դավիթ

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

պարագայում ոչ մի ակնարկ չենք տեսնում, որ նա հպարտացավ կամ որ բազավորելու փառասիրական ձգոտում ունեցավ. Երբ Դավիթն անցնում էր Սավուղի հալածանքի փորձությամբ, նա հավանության արժանացավ որպես այն հարմար մարդը, ով իրականացնելու է Աստծու տնտեսությունը՝ երկրի վրա հաստատելով Աստծու բազավորությունը:

- Բ. Երբ Դավիթը ենթարկվում էր Սավուղի հալածանքին, նա Սավուղին ոչնչացնելու երկու հնարավորություն ունեցավ, բայց Դավիթը դա չարեց Աստծուց իր երկյուղելու պատճառով, քանի որ Սավուղն Աստծու օծյալն էր. սա ցույց է տալիս, որ Դավիթն Աստծու բազավորության մեջ պատշաճ կարգուկանոն էր պահում՝ զգ. 24 և 26, հմմտ Հոմ 12:3:
- Գ. Անկասկած, Դավիթը շատ բան սովորեց իր վրեժը չլուծելու, այլ Աստծու մտահղացման համար իրեն ուրանալու հարցում՝ հիմնվելով այն բանի վրա, որ ինքն Աստծու սրտի համաձայն եղող մարդ էր՝ Ա Թգ 13:14ա:
- Դ. Դավիթը Խրայեկի խսկական զավակի տիպակի օրինակ է Աստծու ընտրյալ ժողովրդին Նրա խոստացած ու տված բարի երկիրը վայելելու հարցում. նա ապավինում էր Աստծուն և քայլում էր Աստծու հետ՝ ըստ Նրա գերիշխանության և ըստ Նրա առաջնորդության ու ցուցումների, իր բոլոր փորձություններում. Դավիթը հույս ուներ մնալու բարի երկրում, որպեսզի կիսեր Աստծու ժառանգությունն ու ծառայեր Նրան՝ 17:36-37, 23:14-16, 30:6բ-10, 26:19բ:
- Ե. Դավիթ անկեղծ վստահությունն Աստծու հանդեպ և նրա հավատարիմ քայլըն Աստծու հետ նրան լիովին որակավորեցին վայելելու բարի երկիրը բարձր աստիճանի, այն էլ՝ բազավորման աստիճանի՝ ըստ Աստծու սրտի՝ բազավորությամբ հանդերձ, որը դարձավ Աստծու բազավորությունը երկրի վրա. Դավիթը մեկ էր Աստծու հետ. այն, ինչ իրենն էր, Աստծունն էր, և այն, ինչ Աստծունն էր, իրենն էր. նա և Աստված միայն մեկ բազավորություն ունեին. այդպիսի մարդը ծայրաստիճան վայելում էր բարի երկիրը, որը Ջրիստոսի նախատիպն էր:
- Զ. Սավուղի մահից հետո «Սավուղի տան և Դավիթի տան միջև երկար պատերազմ եղավ, բայց Դավիթը հետզհետե հզորանում էր, իսկ Սավուղի տունը հետզհետե տկարանում էր» (Բ Թգ 3:1). Դավիթը հաստատվեց Աստծու կողմից որպես բազավոր՝ իր բազավորությամբ հանդերձ, որը բարձրացվեց ի սեր Աստծու ժողովրդի՝ Խրայելի (5:6-25). ավելին՝ «Դավիթը գնալով հզորանում էր, ու Եհովան՝ զորքերի Աստված, նրա հետ էր» (իս. 10). սա ցույց է տալիս, որ Դավիթն ուներ Աստծու ներկայությունը:
- Է. Եթե որևէ հարցում մենք ներքին զգացում չունենք, որ Տերը մեզ հետ է, պետք է զգուշանանք և վերանայենք մեր ճանապարհը (Ա Թգ 16:14). Տիրոջ վերականգնման մեջ ամեն անզամ, երբ ինչ-որ բան ենք անում, պետք է հոգանք Տիրոջ ներկայության զգացողության համար. մենք բոլորս պետք է յուրացնենք երկու բաների համար հոգալու դաշը՝ Աստծու

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Աերքին Աերկայության և մեր միջավայրում արտաքին հաստատման համար (հմմտ Բ Թգ 5:11-12):

- Ը. Բացի դրանից՝ մենք բոլորս պետք է Դավթի դասերը յուրացնենք ինչպես բացասական կողմից, այնպես էլ դրական կողմից. մսեղիի տենչանքն ավերող տարր է, որը կարող է կործանել մեզ. եթե Դավթի նման բարեպաշտ մարդը գայթակղության ենթարկվեց, մի՞թե մենք կարող ենք խուսափել՝ 11:1-27, հմմտ Բ Տմբ 2:22, Ա Կրթ 6:13, 18.
1. Անկախ մեր հոգեւոր ձգտման մեջ ունեցած ձեռքբերումներից՝ մեզնից ցանկացած մեկը կարող է այդախի մեղք գործել. մենք պետք է Աստծու Աերկայության մեջ լրջորեն կարդանք այս գրառումը. այս գրառումը մեզ զգուշացնում է, որ մսեղիին հազուրդ տալը լուրջ բան է. Դավիթը գայթակղվեց՝ պարզապես մեկ հայացք զցելով, այնուհետև նա ճախողվեց ժումկալելու հարցում:
 2. Բոլոր սրբերը, հատկապես Երիտասարդները, պետք է քննեն իրենց սրտերը և սրտում վճռական որոշում կայացնեն՝ երբեք մսեղիին հագուրդ տալու ճանապարհով չգնալու (Դտվ 5:15-16). մենք պետք է ասենք. «Տե՛ր Հիսուս, ես սիրում եմ Ձեզ. ես Ձու կարիքն ունեմ, և ես լնդունում եմ Ձեզ». եթե սա ասենք, Նա կլինի մեր Փրկիչը և մեր ոխնամիկ փրկությունը. որպես պնևմատիկ Քրիստոսը՝ Նա կփրկի մեզ, կպահպանի մեզ և կպաշտպանի մեզ այս դարաշրջանի պղծությունից, որպեսզի պահպանենք այն փառքը, որը ձեռք ենք բերել: